

Զ. Հոգաբարձուներէն մէկը անպատճառ լինի տեղւոյն Գահանայն, և ամենքը լինին չորս հոգի. առանց իրարու պիտութեան կարգադրութիւն չընեն. քահանայն լինի միանգամայն կրօնուսոյց չափաւոր ոռձիկ ընդունելով:

Դ. Մէկ աղգատոհմէն երկու հոգաբարձու բնաւ չընտրուի:

Ե. Առանձին ցուցակադրութեամբ որոշուի աւանդելի առարկայից տարեկան կուրսը, և ըստ այնմ պահանջուի ի վերջ տարւոյն վարժապետներէն յառաջադիմութիւն. նոյնպէս դպրոցի բոլոր ուսմանց կուրսը (ընթացքը) յայտնի լինի:

Ղ. Եկեղեցիէն փող ընդունող դպրոցները անպատճառ երգեցողութեան վարժապետ ու կանոնաւոր դասատուութիւն պէտք է մտցնեն դպրոցին մէջ. և այս բանը կարող է քահանայն կատարել յաւելմամբ ոռձիկի, եթէ դպրոցին դրամագլուխը չներկայ առանձին վարժապետ վարձելու:

Ի. Դպրոցի հոգաբարձուք իրաւունք չունենան եկեղեցւոյ և քահանայից դործերուն խառնուրդ որոյ պատճառաւ գրեթէ ամենայն քաղաք քահանային ու ժողովրդեան մէջ խռովութիւն ծագելով, դպրոցին յառաջադիմութիւնը կընդհատուի:

Ը. Եթէ Բիշնէի մէջ շնորհիւ նորընտիր Առաջնորդին Թեմական դպրոց մի բացուի, այն դպրոցին տեսուչը պարտաւորուի տարին մի անգամ աչքէ անցընել արձակուրդի ժամանակ վիճակին դպրոցները, հասու լինել տարեկան հաշուոց, դասադրոց կարեւորութեանը, դասատուութեան եղանակին և այլ ուսումնական պարագայից:

Բ. Այնքան ընտր Օխական դպրոցաց դրամագլուխներն ու տարեկան հաստատուն արդիւնքները տպագրութեամբ հրատարակուին:

Ժ. Որ ամենէն հարկաւոր բանն է, թող Ս. Էջմիածնայ Ուսումնական Յանձնաժողովը և կամ նորա նախագահը չըջարեւրականով խստիւ պատուիրէ այս կանոնները հաստատուն պահել և ի դէպս զանցառութեան, կամ դպրոցի դրամադրոց ու դրամոց շտապութեան՝ բանալ անաչառ ու անկողմնասէր քննութիւն ընդ ձեռն քաղաքական իշխանութեան. որով միայն կարելի է դպրոցաց իշխական ապահովութիւնը պահպանել, և տէ-

րութեան դպրոցներուն պէս, միշտ նոյն հաստատուն վիճակ շնորհել ազգային դպրոցաց:

Իսկ եթէ Ուսումնական Յանձնաժողովոյն հրատարակած կանոնները՝ սոսկ առաջարկութիւն մնան նաև այսուհետև, իրրև պեղեցիկ յօգուած մի համարուին լրացրի, և ոչ իրրև հարկեցուցիչ պարտք զայն ըստ բառական մտաց կատարելու, յայնժամ՝ յոյս չկայ որ դպրոցաց վիճակը բարւոքի, նոցա հոգեւոր ու ժողովրդական նշանակութեան կապը ամրանայ, հապա անտարակուսելի բան է որ քսան և հինգ տարիէ յետոյ ինձ նման ուրիշ բանասէր մի սոյն առաջարկութիւնները ընկելով, գուցէ աւելի դժուարակատարները, ցաւօք սրտի պիտի նկարագրէ դպրոցաց սոյնպիսի խղճալի դրութիւնը, զոր ես ինքնին դրոյեալ ի ճշմարտասիրութեանէ ի կարծոյ գիր անցուցի՝ յուսալով որ մասնաւորաց ոմանց շահասիրութիւնը դուրս հանելով՝ ազգիս ընդհանրութեանը՝ դպրոցաց բարեկարգութեանը հոգալու համար, ջնջին ծառայութիւն մի մատուցած կհամարուիմ:

Գ. Տ. Ս. Մ. Ը.

Ի 20 Մայիս 1872 թ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ.

(Եւր. և Էրէլ.)

Ժ.Դ.

Այս տեղ կամենում ենք ասել, որ մեր մէջ ուսումնատուութեան եղանակը դեռ ևս բոլորովին վերացական ու անկենդան է, որովհետև մեզանում հայեցողական ուսումնատուութեան (наглядное обучение) վերայ ուշք չեն դարձնում, այն ինչ սկզբնական դաստիարակութեան հիմքը նա պիտի լինի, նա միայն կարող է կենսի ներշնչել մեր դպրոցների մէջ և մանուկ սերնդին մէջ զարգացնել առողջ դատողութիւն և ճիշդ հասկացողութիւն չըջապատող աշխարհի մասին: Գանի՜ քանի՜ տարիներ երկսան կարդում է, շատ բաներ լսում, շատ բաներ անգիր անում և շատ բաների պատասխաններ տալիս հարցմունքի

ժամանակի բայց դպրոցից դուրս գալիս նա դարձեալ խապառ հում է ու ոչինչ ճիշդ տեղեկութիւնների պաշար չունի, որ կեանքի մէջ կարողանայ նրանցից օգուտ քաղել. էնդուր որ՝ նա իւր բոլոր սովորածը միմիայն լսել է և ոչինչ չի գիտէ:

Բնութեան մէջ առաջ նիւթը առարկան է, յետոյ նորա վերայ կազմուած հասկացողութիւնը, իսկ մեր համար միայն կայ անունը, հասկացողութիւն, և ինչիսկ իր, իրականութիւն, — ամենեւին, Գասազըրքերի պակասութեան մասին միշտ գանգատուում ենք, բայց որքան էլ բազմաթիւ ու կատարեալ լինին այդ գասազըրքերը, դարձեալ նրանք մեռած կըմնան առանց հայեցողական կրթութեան: Օրինակի համար. դիցուք թէ Տ. Ղևոնդեանցի Մայրենի Լեզուն վերայ, որը իւր տեսակին մէջ առաջինն է մեզանում, սովորում է երեխան, ի՞նչպէս հասկացնէք նրան զօ. 5, 6, 7, 8, 11, 12, 14, 15, 19 և 21. Քննելով և ուրիշ շատ տեղերում բազմաթիւ բառերը. ի հարկէ, այս ո՛չ թէ դժուար, այլ անհնարին է: Հայեցողարար ուսանելու կարօտութիւնը ոչ թէ միայն երեխաները ունին, այլ և մեծերը:

Ուրեմն եթէ ցանկանում ենք, որ մեր ուսումնարանները փոքր ի շատէ դէպի իւրեանց նպատակը դիմեն՝ անպատճառ պարտաւոր են նրանց վարչութիւնները և ամեն հասկացող անձինք անդադար խորհել և խօսել այս բանի համար, թէ ի՞նչ չափով և հնարներով կարելի էր հայեցողական ուսումնաստուութիւնը մտցնել մեր դպրոցների մէջ:

Հատ ցաւում ենք, որ Պ. Տ. — Ղևոնդեանցին չէ յաջողուել Ռուսերէնում՝ եղած բոլոր նկարները Հայերէնի մէջ դնել. բայց կարծեք, դժուար չէր գրքի սկզբի քառանկիւնների մէջ զետեղուած (որը վերեւ էլ յիշեցինք) սկզբնական նկարչութեան օրինակները գտնէ Հայերէնում՝ դնել, որովք շատ օգտակար կլինէին:

Ժ.Ե.

Ղևոնդեանցի մեր խօսքը՝ պարտաւոր ենք ասելու, որ Պ. Տէր-Ղևոնդեանցի աշխատութիւնը

— Մայրենի Լեզուն իւր տեսակում առաջինն է մեր մէջ և ամենաթանկագինը մեզ համար, ուրեմն դա անպատճառ պիտի մտնէ և մտնէ մեր բոլոր դպրոցների և ընտանիքների մէջը, բանի որ նրանից լաւ չունինք: — Պ. Տէր-Ղևոնդեանցը, համեմատաբար խօսելով, գեղեցիկ քայլը արաւ սկզբնական դասագրքերի գործում՝ մեր հասարակութեանը տալով Ուշինակու պատուական գրքի և ոճի թարգմանութիւնը. բայց որովհետեւ աշխարհումս ամենայն բան փոփոխութեան և կատարելագործութեան ենթակայ է, մասն որոյ իրաւացի յոյս ունինք, որ Պարոնը գրքի երկրորդ տպագրութեան համար, որքան կարելի է, օգուտ քաղէ ուրիշների և մեր նկատողութիւններից, ու մեր երեխաները բազմ ունենան Մայրենի լեզուն միւսանգամ յոյս ընծայուելիս տեսնել, որ Ա. նորա արտաքինը — թուղթը՝ ձեւը և տիպը հիմնականից աւելի ամուր, գեղեցիկ և մաքուր են: Բ. նա սրբուած, ազատուած է այժմեան տպագրական բազմաթիւ սխալներից: Գ. նրա սկզբում զետեղուած են քառանկիւնների մէջ՝ Ուշինակու գրքում եղած սկզբնական նկարչութեան օրինակները: Դ. նա ունի բաւականին յարմար և գեղեցիկ վայելչագրութեան օրինակներ: Ե. նորանում շատ և բաւականին կանոնաւոր պատկերներ կան զրուած: Զ. նորա վերջը աւելացրած է առաջին (եթէ կարելի է և երկրորդ) տարուայ կրօնագիտութեան և երգեցողութեան կարգը: Է. նորանում ընթերցանութեան համար աւելացած են ուրիշ գեղեցիկ յօդուածներ, հանելուկներ և սուածներ: Ը. նրա առաջին մասից — Այբբենարանից վերացած են մեր ցոյց տուած թերութիւնները: Թ. նրա հետ դուրս է եկել մի առաջնորդական գրքոյկ էլ դասատուների համար: Եւ ժ. նրանում համ ուշք է դարձրած մեր արած բոլոր նկատմունքներին վերայ, համ էլ՝ առհասարակ, ուրիշ կարեւոր փոփոխութիւններ են եղած: — Այսպիսով Մայրենի Լեզուն, որը այնքան ընդունակ է միշտ կատարելագործվելու, մէկ հիանալի գրքոյկ կը դառնայ մեր դպրոցների և գերդաստանների համար: Աստուած տայ . . . :

Յ.Բ. Տ. - Գ.Բ.Բ.

Ա. Դ. Բ. 1872 Մ. Դ. Դ. Դ.